# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչականշենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստkotayk@mta.gov.am

## ՈՒ Ղ Ե Ր Ձ

Եզդիական համայնքի հարգելի՛ ներկայացուցիչներ,

ի սրտե շնորհավորում եմ ձեզ եզդիական Նոր Տարվա՝ Մալաքե Թաուսի կապակցությամբ:

Հայ և եզդի ժողովուրդների եղբայրությունն ու բարեկամությունը հաստատվել ու ամրապնդվել է դարերի ընթացքում:

Մենք միասին հաղթահարել ենք պատմության բազմաթիվ փորձություններ, միասնաբար կերտել մեր հայրենիքը ու այսօր էլ շարունակում ենք կայացնել մեր պետությունը:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել հատկապես մեր մարզի եզդիական համայնքին: Ցանկանում եմ, որ այն տրամադրությունը, որն այսօր իշխում է ձեր օջախներում, պահպանվի ամբողջ տարվա ընթացքում՝ բարեբերություն և խաղաղություն բերելով ձեր ընտանիքներին:

Հարգանքով՝

Ռ. Պետրոսյան